Տեղական և մարզային կյանքում երիտասարդների մասնակցության վերանայված եվրոպական խարտիա

Տեղական և մարզային կյանքում երիտասարդների մասնակցության վերանայված եվրոպական խարտիա

Խմբագիր
Անուշ Հայրապետյան

Թարգմանիչ
Թագուհի Մինասյան

Սույն խարտիան թարգմանվել է «ԿԱՋԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամի կողմից՝ Վրաստանում Նիդերլանդների թագավորության դեսպանատան աջակցությամբ:

«ԿԱՋԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամ
ՀՀ, ք. Երևան 0001, Թումանյան 24-5
Հեռ. +374 10 58 40 32
kasaam@kasa.am

KOMITAS ACTION SUISSE - ARMÉNIE

Kingdom of the Netherlands

© «ԿԱԶԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամ

Երևան 2017



Խարտիա՝ առանց կոնվենցիայի կարգավիճակի

Ընդունվել է Եվրոպայի տեղական և մարզային իշխանությունների կոնգրեսի կողմից (2003թ., մայիսի 21, 10-րդ նիստ, Հանձնարարական 128-ի հավելված)

Ներածություն

Տեղական և մարզային կյանքում երիտասարդների մասնակցության վերանայված եվրոպական խարտիայի ստեղծման հիմքը դրվել է Եվրոպայի տեղական և մարզային իշխանությունների մշտական հանձնաժողովի կողմից կազմակերպված երիտասարդական քաղաքականության առաջին և երկրորդ համագումարների ժամանակ, որոնք տեղի են ունեցել Լոզանում (1988թ., մայիս) և Լանգոլենում (1991թ., սեպտեմբեր): Սրանից անմիջապես հետո՝ 1992 թ. մարտին, մշտական հանձնաժողովը հաստատեց խարտիան ընդունելու մասին Բանաձև 237-ը և Հոդված 22-ը:

Տեղական և մարզային կյանքում երիտասարդների մասնակցության եվրոպական խարտիայի 10-րդ տարելիցը տոնելու կապակցությամբ Եվրոպայի խորհրդի կազմում գործող Եվրոպայի տեղական և մարզային իշխանությունների կոնգրեսը Եվրոպայի խորհրդի երիտասարդության և սպորտի տնօրինության հետ միասին կազմակերպեց «Երիտասարդները իրենց քաղաքների և մարզերի դերակատարներն են» թեմայով խորհրդաժողովը: 2002 թ. մարտի 7-ին և 8-ին Կրակովում կայացած

համագումարի ընդհանուր նպատակն էր գնահատել խարտիայի տասնամյա գործունեության ընթացքում երիտասարդների մասնակցության առաջընթացը, ինչպես նաև քննարկել երիտասարդների մասնակցության խրախուսման հետագա քայլերը, այդ թվում նաև՝ լավագույն օրինակների տարածումը:

Համագումարի մասնակիցները ընդունեցին Կրակովյան հռչակագիրը, որտեղ նրանք վերահաստատեցին, որ երիտասարդները, ինչպես ցանկացած տարիքային խումբ, պետք է ներկայացված լինեն քաղաքապետարաններում և մարզերի կառավարման մարմիններում, և, հետևաբար, նրանց համար պետք է հասանելի լինի հասարակական հարցերում մասնակցության ցանկացած ձևաչափ:

Այդպիսով վերահաստատվում և խրախուսվում է երիտասարդների դերը ժողովրդավարական հասարակության կայացման գործում՝ մասնավորապես տեղական և մարզային հասարակական կյանքում: Ավելին, համաժողովը նպաստեց նաև Եվրոպայի խորհրդի կողմից անցկացվող «Աշխատեցնելով ժողովրդավարական ինստիտուտները» ինտեգրացված ծրագրի իրականացմանը:

Ավելին, մասնակիցները կոչ արեցին անդրադառնալ ժամանակակից հասարակության մեջ երիտասարդների առջև ծառացած նոր մարտահրավեր-ներին: Նրանք խնդրեցին Եվրոպայի տեղական և մարզային իշխանությունների կոնգրեսին՝ (ԵՏՏԻԿ), և Եվրոպայի խորհրդի երիտասարդության հարցերով խորհրդատվական խորհրդին նշանակել փորձագետներ՝ Տեղական և մարզային կյանքում երիտասարդների մասնակցության եվրոպական խարտիան

բարեփոխելու առաջարկներ ներկայացնելու նպատակով: Այն պետք է լուծումներ առաջարկեր 21-րդ դարի այնպիսի մարտահրավերներին, ինչպիսիք են տեղեկատվական հասարակությունը և քաղաքային անապահովությունը:

Աշխատանքային հանդիպումները գումարվեցին 2002 թ. վերջին և 2003 թ. սկզբին: Այս աշխատանքային հանդիպումների քննարկումները հիմք դրեցին խարտիայի ներկայիս տարբերակի ստեղծմանը: Խարտիայի այս մասը բաղկացած է երեք բաժիններից: Առաջին մասը տեղական և մարզային իշխանություններին տրամադրում է ուղեցույց այն մասին, թե ինչպես իրականացնել այն քաղաքականությունները, որոնք իրենց ազդեցությունն են ունենում երիտասարդների վրա մի շարք ոլորտներում: Խարտիայի երկրորդ մասը տեղական և մարզային իշխանություններին ապահովում է երիտասարդների մասնակցությունը ընդլայնելու հմտություններով: Իսկ երրորդ բաժինը տրամադրում է խորհրդատվություն, թե ինչպես կարելի է երիտասարդների մասնակցության համար ինստիտուցիոնալ պայմաններ ապահովել:

Նախաբան

Եթե մենք ուզում ենք կառուցել ավելի ժողովրդավարական, ներառական և բարգավաճ հասարակություն, պետք է հաշվի առնել, որ երիտասարդների ակտիվ մասնակցությունը տեղական և մարզային մակարդակով որոշումների կայացմանը և իրականացմանը շատ կարևոր է: Երիտասարդների մասնակցությունը ցանկացած համայնքի ժողովրդավարական կյանքին ավելին է, քան պարզապես ընտրություններում քվեարկելը կամ առաջադրվելը, թեև դրանք նույնպես կարևոր հանգամանքներ են: Մասնակցություն և ակտիվ քաղաքացիություն վարելը նշանակում է ունենալ իրավունք, միջոցներ, և, անհրաժեշտության դեպքում, աջակցություն՝ մասնակցելու, որոշումների ընդունման վրա ազդելու և ներգրավվելու այնպիսի գործողությունների մեջ, որոնք նպաստում են ավելի լավ հասարակության կառուցմանը:

Տեղական և մարզային իշխանությունները՝ որպես երիտասարդներին ամենամոտ կանգնած իշխանության ձև, շատ կարևոր դեր ունեն երիտասարդների մասնակցությունը խրախուսելու հարցում:

Ներգրավելով երիտասարդներին՝ տեղական և մարզային իշխանությունները կարող են համոզված լինել, որ երիտասարդները ոչ միայն կլսեն և կիմանան ժողովրդավարության և քաղաքացիության մասին, այլ հնարավորություն կունենան նաև այն գործնականում կիրառել: Սակայն երիտասարդների մասնակցությունը չի նշանակում բացառապես ակտիվ քաղաքացիության կամ ապագայի համար ժողովրդավարության կառուցման գաղափարի խրախուսում: Եթե ցանկանում ենք, որ մասնակցությունը երիտասարդների կյանքում իմաստ ունենա, ապա չափազանց կարևոր է, որ նրանք կարողանան ազդեցություն ունենալ որոշումների և գործողությունների ձևավորման վրա երիտասարդ, այլ ոչ թե մեծ տարիքում:

Երբ տեղական և մարզային իշխանությունները աջակցում և խթանում են երիտասարդների մասնակցությունը, նրանք նպաստում են նաև երիտասարդների սոցիալական ինտեգրման գործընթացին՝ օգնելով նրանց առնչվել ոչ միայն երիտասարդների առջև ծառացած խնդիրների և հիմնախնդիրների հետ, այլ նաև ներկայիս հասարակության մարտահրավերների հետ, որտեղ հաճախ գերակշռում են անանունությունը և անհատապաշտությունը: Այնուամենայնիվ, երիտասարդների մասնակցությունը տեղական և մարզային կյանքում ավելի հաջողակ, երկարատև և իմաստալից դարձնելը պահանջում է ավելին, քան քաղաքական կամ վարչական համակարգերի զարգացումը կամ վերակառուցումը: Երիտասարդների մասնակցությունը խրախուսող ցանկացած քաղաքականություն կամ ծրագիր պետք է մշակված լինի այնպես, որ մշակութային միջավայրը լինի երիտասարդակենտրոն, ինչպես նաև հաշվի

առնի երիտասարդների բազմազան կարիքները և ձգտումները, ներառի զվարճանքի որոշակի տարրեր:

Սկզբունքներ

1. Երիտասարդների մասնակցությունը տեղական և մարզային կյանքին պետք է կազմի հասարակական կյանքին քաղաքացիների մասնակցության ընդհանուր քաղաքականության մի մասը՝ ինչպես սահմանված է Նախարարների խորհրդի կողմից ներկայացված Հանձնարարական 19-ում (2001թ.), որն ուղղված է Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին և վերաբերում է տեղական հասարակական կյանքին քաղաքացիների մասնակցությանը:

2. Տեղական և մարզային իշխանությունները գիտակցում են, որ բոլոր ոլորտային քաղաքականությունները պետք է ունենան երիտասարդական ուղղվածություն: Հետևաբար, նրանք պարտավորվում են կատարել սույն խարտիայի դրույթները և իրականացնել մասնակցության տարբեր ձևաչափեր՝ երիտասարդների և նրանց ներկայացուցիչների հետ խորհրդակցությամբ և համագործակցությամբ:

3. Այս սկզբունքը, ինչպես նաև սույն խարտիայի մեջ առաջարկված մասնակցության տարբեր ձևերը վերաբերում են բոլոր երիտասարդներին՝ առանց որևէ խտրականության: Այդ նպատակին հասնելու համար հատուկ ուշադրություն է պետք դարձնել տեղական և մարզային կյանքում անապահով խավին, ինչպես նաև էթնիկ, ազգային, սոցիալական, սեռական, մշակութային, կրոնական և լեզվական փոքրամասնություններին պատկանող երիտասարդների մասնակցության խրախուսմանը:

Ոլորտային քաղաքականություն

4. Տեղական և մարզային իշխանությունները պետք է աջակցեն երիտասարդական միությունների, կազմակերպությունների, երիտասարդական խըմբերի և համայնքային կենտրոնների կողմից իրականացվող սոցիալ-մշակութային գործունեությանը, որը, ընտանիքի, դպրոցի և աշխատանքի հետ միասին, համայնքապետարանում կամ մարզում սոցիալական համախմբվածության ապահովման հիմնասյուներից մեկն է: Երիտասարդների կողմից նմանատիպ գործունեությունը սպորտի, մշակույթի, արհեստի, առևտրի, արվեստի, ստեղծագործելուն ու արտահայտվելուն ուղղված այլ ոլորտներում, ինչպես նաև սոցիալական գործունեության ոլորտում երիտասարդական մասնակցության և երիտասարդական քաղաքականության իրականացման համար իդեալական միջոց է:

5. Տեղական և մարզային երիտասարդական միությունների ոլորտը զարգացնելու նպատակով տեղական և մարզային իշխանությունները պետք է համապատասխան միջոցներով աջակցեն մասնավորապես այն կազմակերպություններին, որոնք պատրաստում են երիտասարդական

I. 1
Սպորտ, ժամանց և հասարակական կյանք

ակումբների և կազմակերպությունների դասընթացավարներ և առաջնորդներ: Նրանք պետք է աջակցեն նաև երիտասարդական աշխատողներին, ովքեր շատ

կարևոր դեր են խաղում տեղական և մարզային կյանքում:

6. Տեղական և մարզային իշխանությունները պետք է աջակցեն երիտասարդական միություններին օրենսդիր մարմիններում երիտասարդների ակտիվ մասնակցությունը խթանելու հարցում:

I.2 Երիտասարդների զբաղվածություն և գործազրկության դեմ պայքար

7. Ներկայումս երիտասարդների առջև ծառացած տնտեսական և սոցիալական պայմանները իրենց ազդեցությունն են ունենում համայնքային կյանքին մասնակցելու երիտասարդի ցանկության և հնարավորության վրա: Երբ երիտասարդները գործազուրկ են կամ ապրում են աղքատության պայմաններում, քիչ հավանական է, որ նրանք տեղական կամ մարզային կյանքում ակտիվ քաղաքացիություն ցուցաբերելու որևէ ցանկություն, ռեսուրս և սոցիալական աջակցություն կունենան: Մեծ հավանականություն կա նաև, որ գործազուրկ երիտասարդները կարող են հայտնվել հասարակության կողմից ամենամեկուսացվածների շարքերում: Հետևաբար, տեղական և մարզային

իշխանությունները պետք է մշակեն այնպիսի քաղաքականություններ և խրախուսեն այնպիսի նախաձեռնություններ, որոնք ուղղված են երիտասարդների գործազրկության նվազեցմանը:

8. Այսպիսով, տեղական և մարզային իշխանությունները պետք է՝

i. Երիտասարդների (այդ թվում նաև՝ գործազուրկ կամ նման վտանգի ենթարկվելու հավանականություն ունեցող), տեղական գործատուների, արհմիությունների, կրթական, վերապատրաստման և զբաղվածության կենտրոնների ու երիտասարդական կազմակերպությունների հետ համատեղ մշակեն քաղաքականություններ և ծրագրեր՝ ուղղված երիտասարդների գործազրկության պատճառների վերացմանը և երիտասարդների համար զբաղվածության հնարավորությունների խրախուսմանը,
ii. հիմնեն տեղական զբաղվածության կենտրոններ, որոնք մասնագիտական օգնություն և աջակցություն կտրամադրեն գործազուրկ երիտասարդներին՝ կայուն աշխատանք գտնելու նպատակով: Ցանկության դեպքում գործազուրկ երիտասարդները պետք է ունենան նման կենտրոնների համակարգման մեջ ներգրավվելու իրավունք,
iii. աջակցեն երիտասարդների կամ երիտասարդների խմբերի կողմից բիզնեսների, ձեռնարկությունների և կոոպերատիվների ստեղծմանը՝ տրամադրելով նրանց ֆինանսական և այլ աջակցություն, օրինակ՝ տարածք, սարքավորում, ուսուցում և մասնագիտական խորհրդատվություն,
iv. խրախուսեն սոցիալական տնտեսության, համայնքային ինքնաջակցման

նախաձեռնությունների կամ կոոպերատիվների ոլորտում երիտասարդական փորձարկումները:

I.3 Քաղաքային միջավայր և բնակավայր, բնակարանային քաղաքականություն և տրանսպորտ

9. Տեղական և մարզային իշխանությունները, երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ միասին, պետք է ստեղծեն պայմաններ քաղաքային միջավայրին ուղղված քաղաքականության մշակման համար՝ հիմնված ինտեգրված և ավելի քիչ մասնատված միջավայրում ապրելու սկզբունքի վրա: Վերջինս կարող է նպաստել սոցիալական շփմանը և բարձրորակ հանրային տարածքների ձևավորմանը:

10. Տեղական և մարզային իշխանությունները պետք է հետամուտ լինեն, որ բնակարանային և քաղաքային միջավայրի քաղաքականությունը իր խորհրդակցությունների փուլում ակտիվորեն ներգրավի երիտասարդներին՝ համախմբելով տեղական կամ մարզային մակարդակում ընտրված ներկայացուցիչներին, տնտեսական ոլորտում որոշում կայացնողներին, միությունների ղեկավարներին և ճարտարապետներին: Նրանց նպատակն է՝

i. կազմել ծրագրեր՝ ուղղված ավելի ներդաշնակ միջավայր ունենալուն, որը կարող է նպաստել անհատի կայացմանը և սերունդների միջև

իրական համերաշխության զարգացմանը,

ii. մշակել քաղաքային միջավայրի ներդաշնակ քաղաքականություն, որը հաշվի կառնի բնակիչների սոցիալական և միջմշակութային իրականությունը՝ բնակարանային և/կամ բնակարանների վերանորոգման ծրագրեր կազմելիս:

11. Սերտորեն համագործակցելով երիտասարդական կազմակերպությունների, վարձակալական և/կամ սպառողական կազմակերպությունների, սոցիալական բնակարանների գործակալությունների և սոցիալական աշխատողների հետ՝ տեղական և մարզային իշխանությունները պետք է նոր ձևավորվող կամ արդեն գոյություն ունեցող կառույցների ներսում խրախուսեն՝

i. երիտասարդներին բնակարաններով ապահովելու տեղեկատվական ծառայությունների զարգացումը,

ii. տեղական համակարգերի (օրինակ՝ ցածր տոկոսադրույքով վարկեր, վարձակալության երաշխիքային համակարգեր) զարգացումը՝ միտված օգնելու երիտասարդներին բնակարան ձեռք բերելու հարցում:

12. Երիտասարդների շարժունակությունը հնարավոր է դառնում հասարակական տրասպորտային միջոցների հասանելիության միջոցով, որի հիմնական օգտվողները, ի դեպ, հենց երիտասարդներն են: Երիտասարդների շարժունակությունը անփոխարինելի է հասարակական կյանքում մասնակցության և լիիրավ քաղաքացի լինելու համար:

13. Հետևաբար, երիտասարդները պետք է ներգրավված լինեն հասարակական տրանսպորտային միջոցների կազմակերպման հարցերում՝ թե՛ տեղական, և թե՛ մարզային մակարդակով: Տրանսպորտի վճարը պետք է այնպես հարմարեցված լինի, որ հասանելի լինի առավել կարիքավոր երիտասարդների համար:

14. Գյուղական վայրերում շարժունակությունը և տրանսպորտը հիմնարար անհրաժեշտություն են կյանքի որակի ապահովման համար, և ոչ թե պարզապես երիտասարդների մասնակցությունը դյուրին դարձնող անհրաժեշտություն: Հետևաբար, տեղական և մարզային իշխանությունները պետք է աջակցեն գյուղական վայրերի տրանսպորտային նախաձեռնություններին, որոնց նպատակն է ապահովել տրանսպորտային ծառայություններ (հանրային կամ մասնավոր, անհատական կամ կոլեկտիվ) և բարձրացնել գյուղական վայրերում բնակվող խմբերի, ինչպես օրինակ, երիտասարդների շարժունակությունը, ովքեր ներկայումս մեկուսացված են տրանսպորտային միջոցների բացակայության պատճառով:



15. Դպրոցը այն հաստատությունն է, որտեղ երիտասարդները ոչ միայն անց են կացնում իրենց կյանքի զգալի մի մասը, այլ նաև ստանում են ֆորմալ կրթության: Այն նաև մի վայր է, որտեղ շատերը ձևավորում են կյանքի վերաբերյալ իրենց տեսակետները և հեռանկարները: Հետևաբար, կարևոր է, որ երիտասարդներն իրազեկվեն մասնակցության և ժողովրդավարության ձևերի մասին, երբ դեռ դպրոցում են: Կարևոր է նաև, որ ժողովրդավարության, մասնակցության և քաղաքացիության մասին դասընթացները դպրոցում հասանելի լինեն և ունենան հավաստի աղբյուրներ: Միևնույն ժամանակ, դպրոցը պետք է լինի նաև այն վայրը, որտեղ երիտասարդները կկարողանան գործնականում փորձարկել ժողովրդավարությունը, որտեղ նրանց մասնակցությունը որոշումների կայացման գործընթացին խրախուսվում, խթանվում և արդյունավետ է համարվում:

Այսպիսով՝

i. տեղական և մարզային իշխանությունները պետք է ակտիվորեն խրախուսեն երիտասարդների

I.4 Երիտասարդների մասնակցության խթանմանն ուղղված կրթական և վերապատրաստման քաղաքականություն

մասնակցությունը դեռևս նրանց դպրոցական տարիներին: Նրանք պետք է ապահովեն ֆինանսական և այլ տեսակի աջակցություն, ինչպես օրինակ՝ հանդիպումների կազմակերպման համար անհրաժեշտ հարմարությունների ապահովում՝ հնարավորություն տալով երիտասարդներին դպրոցներում ժողովրդավարական աշակերտական միություններ ստեղծել: Նման միությունները պետք է լինեն անկախ և ինքնակառավարվող, և, ցանկության դեպքում, պետք է իրավունք ունենան մասնակցել դպրոցի կառավարմանը վերաբերող որոշումների կայացման գործընթացին՝ դպրոցի ուսուցիչների և ղեկավարների հետ միասին:

ii. եթե տեղական և մարզային իշխանությունները պատասխանատու են

դպրոցական ուսումնական ծրագրերի համար, իշխանությունները պետք է հետամուտ լինեն, որ ուսումնական ծրագիրը և դրա մշակումը շարունակաբար քննարկվի դպրոցականների և աշակերտական միությունների հետ: Նրանք պետք է նաև ապահովեն, որ քաղաքացիական և քաղաքական կրթությունը ներառված լինի դպրոցական ուսումնական ծրագրում և ունենա անհրաժեշտ շեշտադրում և աղբյուրներ բոլոր դպրոցականների կրթական ծրագրերում:

16. Տեղական և մարզային իշխանությունները պետք է փոխանակման քաղաքականության միջոցով աջակցեն այն միավորումներին կամ խմբերին (երիտասարդական աշխատողներին, ուսանողներին կամ կամավորներին), որոնք նպաստում են երիտասարդների շարժունակությունը: Նրանք պետք է մշակեն միմյանց հետ կապ հաստատելու քաղաքականություն և խթանեն եվրոպական քաղաքացիության մասին իրազեկվածությունը:

I.5 Շարժունակություն և փոխանակում

17. Տեղական և մարզային իշխանությունները պետք է աջակցեն երիտասարդներին, նրանց կազմակերպություններին և դպրոցներին ակտիվորեն մասնակցելու միջազգային թվինինգ ծրագրերին, բոլոր տեսակի փոխանակումներին, ինչպես նաև եվրոպական ցանցերում ներգրավվելուն: Տեղական և մարզային իշխանությունները պետք է պատրաստ լինեն նրանց ֆինանսական աջակցություն տրամադրել՝ լեզուների ուսուցումը և միջմշակութային փոխանակումները, ինչպես նաև փորձի փոխանակումը խթանելու նպատակով:



18. Նրանք պետք է ընդգրկեն երիտասարդներին և/կամ նրանց ներկայացուցիչներին թվինինգի հանձնաժողովներում և նման փոխանակումների համար պատասխանատու այլ կառույցներում:

19. Ուշադրության կենտրոնում պահելով այնպիսի ծրագրերի իրականացումը, որոնք առաջարկվում են երիտասարդների կողմից և նպատակ ունեն խթանել թե՛ համընդհանուր առողջապահության գաղափարը, թե՛ համայնքային կյանքի դինամիկան՝ տեղական և մարզային իշխանությունները պետք է ստեղծեն կամ զարգացնեն մի համակարգ, որը խորհրդատվության հնարավորություն կապահովի երիտասարդական կազմակերպությունների, ընտրված ներկայացուցիչների, ինչպես նաև բոլոր այն սոցիալական և մասնագիտական խմբերի համար, ովքեր մտահոգվում են սոցիալական բարեկեցությամբ և առողջապահության խթանմամբ:

20. Առերեսվելով երիտասարդների կողմից ծխախոտի, ալկոհոլի և թմրանյութերի չարաշահման խնդրին՝ տեղական և մարզային իշխանությունները,

I.6 Առողջապահություն

երիտասարդական կազմակերպությունների և առողջապահական ծառայությունների ներկայացուցիչների հետ միասին, պետք է ներդնեն, զարգացնեն և խթանեն հատուկ տեղեկատվական քաղաքականություն և խորհրդատվական ծառայություններ նման խնդիրներից տուժած երիտասարդների համար: Նրանք պետք է նաև մշակեն վերապատրաստման հատուկ քաղաքականություն երիտասարդ սոցիալական աշխատողների, կամավորների և այն կազմակերպությունների ղեկավարների համար, ովքեր ապահովում են կանխարգելման և վերականգնողական ծառայություններ վերոնշյալ երիտասարդների համար:



21. Հաշվի առնելով սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների ներկայումս գրանցված աճը՝ տեղական և մարզային իշխանությունները պետք է ինտենսիվացնեն երիտասարդներին ուղղված տեղեկատվական քարոզարշավները և կանխարգելիչ միջոցառումները՝ այդպիսով խթանելով համայնքային այնպիսի հարաբերությունները, որտեղ տեղ չունեն բարոյական դատողությունն ու խտրականությունը: Երիտասարդները և տեղական երիտասարդական կազմակերպությունների ու առողջապահական կազմակերպությունների ներկայացուցիչները պետք է սերտորեն ներգրավված լինեն նմանատիպ տեղեկատվության մշակման և տարածման ծրագրերի նախագծման և իրականացման գործընթացում:

22. Տեղական և մարզային մակարդակի հարցերում կանանց և տղամարդկանց հավասար մասնակցության բարենպաստ պայմաններ ստեղծելու համար տեղական և մարզային իշխանությունները պետք է աջակցեն երիտասարդ տղամարդկանց և կանանց՝ մասնագիտական, հասարակական, քաղաքական,

I.7 Գենդերային հավասարություն

տեղական և մարզային մակարդակի մարմիններում պատասխանատու պաշտոններ ստանձնելու գործընթացում:

23. Տեղական և մարզային իշխանությունները պետք է իրենց իշխանության սահմաններում խթանեն տղամարդկանց և կանանց հավասարություն քարոզող կրթական քաղաքականությունը՝ վաղ մանկության տարիքից սկսած:

24. Տղամարդկանց և կանանց միջև հավասարություն քարոզող քաղաքականությունը խթանելու համար տեղական և մարզային իշխանությունները պետք է՝

i. կազմեն միջնաժամկետ ծրագիր, որը նպատակ կունենա լուծել տղամարդկանց և կանանց միջև անհավասարության խնդիրները,
ii. իրականացնեն այնպիսի միջոցառումներ, որոնք նպաստում են աղջիկներին և երիտասարդ կանանց հավասար հնարավորություններ տրամադրելուն:

25. Այս նպատակին հասնելու համար նման քաղաքականությունները պետք է մասնավորապես աղջիկներին և երիտասարդ կանանց հնարավորություն ընձեռեն՝

i. ստանալ կոնկրետ տեղեկատվություն առաջատար մասնագիտական որակավորումների համար անցկացվող վերապատրաստման դասընթացների վերաբերյալ,
ii. սովորել մասնագիտական հմտություններ՝ տրամադրելով նրանց դրամաշնորհներ և մասնագիտացված դասընթացներ ստանալու

հնարավորություններ այն ոլորտներում, որտեղ պաշտոնները սովորաբար զբաղեցվել են տղամարդկանց կողմից,

iii. վերապատրաստել կանանց հանրային քաղաքականության ոլորտի պաշտոններ զբաղեցնելու համար՝ վստահելով նրանց բարձր պաշտոններին բնորոշ պարտականություններ՝ հիմնվելով կանանց համար նախատեսված քվոտայի վրա,

iv. տրամադրել ֆինանսական միջոցներ այնպիսի սոցիալական ծառայությունների համար, որոնք գործում են ի շահ աղջիկների և երիտասարդ կանանց:



I.8 Գյուղական համայնքներ

26. Տեղական և մարզային իշխանությունները, երիտասարդների մասնակցությունը խթանող գործողություններ և ծրագրեր մշակելիս և հաստատելիս, պետք է հաշվի առնեն գյուղական համայնքներում ապրող երիտասարդների կարիքները:

Նրանք պետք է՝

i. համոզված լինեն, որ կրթական, զբաղվածության, բնակարանային, տրանսպորտի և այլ ոլորտային քաղաքականությունները արտացոլում և հաշվի են առնում գյուղական համայնքներում բնակվող երիտասարդների հատուկ կարիքները: Այդ քաղաքականությունները պետք է օգնեն գյուղական համայնքներում ապրել ցանկացող երիտասարդներին ապրել այնտեղ: Գյուղական համայնքներում բնակվող երիտասարդները չպետք է ունենան կամ ակնկալեն ունենալ սոցիալական ծառայությունների և ապահովվածության ավելի ցածր մակարդակ, քան քաղաքում ապրող երիտասարդները,

ii. տրամադրեն ֆինանսական և այլ աջակցություն գյուղական համայնքներում ակտիվ երիտասարդական կամ համայնքային այլ կազմակերպություններին: Նմանատիպ կազ-

մակերպությունները կարող են խթանել գյուղական համայնքներում սոցիալական և մշակութային կյանքը և կարող են երիտասարդների համար կարևոր սոցիալական հարթակ դառնալ: Երիտասարդական և այլ համայնքային կազմակերպությունները կարևոր դեր են խաղում ոչ միայն երիտասարդների մասնակցությունը խրախուսելու գործում, այլ նաև կարող են բարձրացնել կյանքի որակը և պայքարել այնպիսի խնդրի դեմ, ինչպիսին է, օրինակ, գյուղական մեկուսացման խնդիրը:

I.9 Մշակույթի հասանելիություն

27. Նախընտրություններին, վայրին և ժամանակաշրջանին համահունչ՝ արվեստը և մշակույթը միշտ ներկայացել են բազմակի և անընդմեջ փոփոխվող ձևաչափերով: Դրանք, սակայն, անցյալի, ներկայի և ապագայի անհատական և կոլեկտիվ ժառանգության մաս են կազմում, որի ստեղծման մեջ իրենց դերն են ունեցել միմյանց հաջորդող սերունդները: Արվեստը և մշակույթը, կարծես, արտացոլում են յուրաքանչյուր հասարակությունը: Երիտասարդները իրենց մշակութային փորձով և նախաձեռնելու, ուսումնասիրելու և նորարարությամբ հանդես գալու կարողությամբ կառուցում և մեծ դեր են խաղում մշակույթի զարգացման գործում: Ահա այդ պատճառով էլ կարևոր է մշակույթի բոլոր ձևերը նրանց համար հասանելի դարձնելը և խթանել նրանց ստեղծարար գործունեությունը, այդ թվում նաև նոր ոլորտներում:

28. Այդ իսկ պատճառով, տեղական և մարզային իշխանությունները պետք է երիտասարդների և վերջիններիս կազմակերպությունների հետ միասին ընդունեն այնպիսի քաղաքականություններ, որոնք



թույլ կտան վերջիններիս դառնալ մշակույթի ոլորտի դերակատարներ, որոնք կկարողանան ոլորտում գիտելիք և գործնական փորձառություն ձեռք բերել, ստեղծարար գործունեություն ծավալել՝ օգտագործելով այն մեթոդները, որոնք մշակվել են հատուկ այդ նպատակով:

29. Բախվելով շրջակա միջավայրի աճող և ակընհայտ վատթարացման հետ՝ տեղական և մարզային իշխանությունները պետք է ֆինանսական աջակցություն տրամադրեն դպրոցների և տարբեր կազմակերպությունների կրթական ծրագրերին, որպեսզի բարձրացնեն շրջակա միջավայրի խնդիրների վերաբերյալ տեղեկացվածությունը:

I. 10 Կայուն զարգացում և շրջակա միջավայր

30. Տեղական և մարզային իշխանությունները քաջատեղյակ են, որ շրջակա միջավայրի խնդիրները երիտասարդների համար առաջնային մտահոգություն են ներկայացնում, քանի որ վերջիններս պետք է ապագայում պայքարեն անցյալի սխալների հետևանքների դեմ: Այս համատեքստում տեղական և մարզային իշխանությունները պետք է աջակցեն այնպիսի ծրագրերի իրականացմանը, որոնք խթանում են կայուն զարգացումը և շրջակա միջավայրի պահպանությունը և ակտիվորեն ներգրավում են երիտասարդներին և նրանց կազմակերպությունները:

31. Նկատի ունենալով, որ հանցագործությունների և բռնության զոհերը հաճախ երիտասարդներն են և ընդունելով ներկայիս հասարակությունում առկա հանցագործություններին և բռնությանը համապատասխան արձագանք տալու անհրաժեշտությունը, ինչպես նաև այս խնդիրների դեմ պայքարելու գործընթացում երիտասարդներին ուղղակիորեն ներգրավելու անհրաժեշտությունը՝

I.11 Բռնության և հանցագործության դեմ պայքար

32. Տեղական և մարզային իշխանությունները պետք է՝

i. ներգրավեն երիտասարդներին հանցագործությունների կանխարգելման խորհուրդներում, որտեղ դրանք առկա են,

ii. աշխատեն հատկապես այն երիտասարդների հետ, որոնց մոտ առկա է հանցագործություն կատարելու վտանգը կամ ովքեր արդեն որևէ հանցագործություն են կատարել,

iii. օգտագործեն հասանելի բոլոր միջոցները՝ ռասիստական բռնության դեմ պայքարելու համար,

iv. լուծումներ փնտրեն դպրոցներում առկա ցանկացած տեսակի բռնության դեմ: Սա պետք

է իրականացվի շահագրգիռ բոլոր կողմերի հետ համագործակցությամբ՝ կրթական և ոստիկանական իշխանություններ, ուսուցիչներ, ծնողներ, ինչպես նաև երիտասարդներ,

v. նպաստեն այնպիսի կազմակերպությունների և ծրագրերի ցանցերի ստեղծմանը, որոնք խթանում են բռնության դեմ պայքարող միջոցառումները և հանդուրժողականությունը ինչպես դպրոցներում, այնպես էլ դպրոցից դուրս,

vi. առավելագույն ջանք գործադրեն երիտասարդներին սեռական շահագործումից կամ վատ վերաբերմունքի այլ տեսակներից պաշտպանելու համար, ինչպես նաև ապահովեն այնպիսի կառույցների գոյությունը, որոնք զոհերին տրամադրում են հոգեբանական և նյութական աջակցություն, ինչպես նաև գաղտնի խորհրդատվություն:

33. Վերոնշյալն իրականացնելով՝ տեղական և մարզային իշխանությունները նպաստում են երիտասարդների և հանրային իշխանությունների միջև, օրինակ՝ ոստիկանություն, վստահության և հարգանքի մթնոլորտի ստեղծմանը:

34. Տեղական և մարզային իշխանությունները պետք է ակտիվորեն խթանեն մարդու իրավունքները և այն միջոցները, որոնք ուղղված են փոքրամասնությունների (ներառյալ վերջիններիս երիտասարդ անդամների) կամ հաշմանդամություն ունեցող երիտասարդների և այլ խմբերի դեմ խտրականության վերացմանը, և պետք է խթանեն բազմամշակութային համայնքների զարգացումը՝ փոքրամասնությունների ինտեգրման, վերջիններիս բազմատեսակ կարիքները, ավանդույթները, մշակույթը և կենսաոճը հաշվի առնելով:

35. Այս համատեքստում տեղական և մարզային իշխանությունները պետք է՝

i. ընդունեն կամ ամրապնդեն հակախտրական օրենսդրությունը՝ բոլոր քաղաքացիների համար հանրային վայրերի, մասնագիտական վերապատրաստումների, դպրոցների, բնակարանների, մշակութային միջոցառումների և այլ բնագավառների հավասար հասանելիությունը ապահովելու համար: Նմանօրինակ հասանելիությունը պետք է մշտադիտարկվի և երաշխավորվի տեղական ինքնակառավարման

I. 12
Հակախտրականություն

մարմինների, փոքրամասնությունների ներկայացուցիչներից և երիտասարդներից կազմված միասնական մարմինների կողմից,

ii. խրախուսեն միջկրոնական երկխոսությունը, միջմշակութային, հակառասիստական և հակախտրական կրթությունը՝ որպես դպրոցի կրթական ծրագրի մաս:

36. Ընտանիքից, դպրոցից, կրոնական համայնքից կամ այլ «իշխանություններից» կախվածությունից դեպի ինքնավար կյանք անցման ընթացքում երիտասարդները կարող են բախվել իրենց անձնական հարաբերությունների հետ կապված բազմաթիվ խնդիրների հետ (իրենց ընտանիքի կամ մտերիմների, իրենց հասակակիցների, ընկերների կամ սիրած էակների շրջանում): Նրանց սեռականության ի հայտ գալը և ցուցաբերումը ոչ միշտ է հարթ ընթանում, եթե նույնիսկ վերջիններս պատրաստ չեն դա ընդունել: Բացի այդ, սեռական առողջությանն առնչվող մի շարք հարցերի վերաբերյալ անտեղյակություն, ինչպես նաև որոշակի սեռական վարքագծի վտանգների հանդեպ

I.13 Սեռականություն



պաշտոնյաների ցուցաբերած վերաբերմունքի հանդեպ անվստահություն է նկատվում:

37. Առողջ և երջանիկ կյանքով ապրելուն ուղղված իրենց փնտրտուքներում երիտասարդներին օգնելու համար՝ տեղական և մարզային իշխանությունները, ծնողների, դպրոցների կամ այս ոլորտում մասնագիտացող կազմակերպությունների հետ միասին, պետք է խթանեն և աջակցեն՝

i. չուղղորդող սեռական կրթությանը դպրոցներում,
ii. այն կազմակերպություններին կամ ծառայություններին, որոնք մատուցում են տեղեկատվություն հարաբերությունների և ընտանիքի պլանավորման վերաբերյալ,
iii. հասակակիցների հետ խմբային աշխատանքին:

38. Երիտասարդները պետք է հաշվի առնվեն այս ոլորտում երիտասարդներին ուղղված տեղեկատվության մշակման կամ այլ ծառայությունների պլանավորման, իրականացման և գնահատման գործընթացում:

I.14 Իրավունքների և օրենքի հասանելիություն

39. Համատեղ ապրելու պայմաններում հասարակությունները հիմնվում են այնպիսի կանոնների վրա, որոնք պետք է հարգվեն բոլորի կողմից: Ժողովրդավար հասարակություններում այս կանոնները քննարկվում և ընդունվում են քաղաքացիների կողմից ընտրված ներկայացուցիչների կողմից և իրենց արտահայտումն են գտնում հատկապես օրենսդրական տեքստերում, որոնք իրավունքներ և պարտականություններ են ենթադրում բոլորի համար:

40. Քանի որ նման դրույթների քանակը շատանում է, մարդկանց համար ավելի ու ավելի դժվար է դառնում տեղյակ լինել, հարգել և կիրառել դրանք՝ այսպիսով քաղաքացիների միջև անհավասարություն ստեղծելով: Երիտասարդները ևս շատ են առնչվում այս երևույթին:

41. Տեղական և մարզային իշխանությունները այդպիսով պետք է նպաստեն երիտասարդների կողմից իրենց իրավունքների հասանելիությանը՝

i. վերջիններիս գիտելիքները զարգացնելու միջոցով՝ տեղեկատվություն տարածելով, հատկա-

պես դպրոցներում, հասակակիցների խմբերում և տեղեկատվական կենտրոններում,

ii. վերջիններիս կողմից իրենց իրավունքների իրացման միջոցով՝ ապավինելով երիտասարդների աջակցության ծառայությունների օգնությանը,

iii. թույլ տալով երիտասարդներին մասնակցել նոր կանոնների մշակմանը:



Երիտասարդական մասնակցության գործիքներ

42. Իրական երիտասարդական մասնակցության հասնելու համար երիտասարդներին պետք է հասանելի լինեն մի շարք գործիքներ: Սա ենթադրում է մասնակցության թեմայով վերապատրաստման դասընթացի մշակում երիտասարդների համար, վերջիններիս տեղեկատվության և հաղորդակցման միջոցներով ապահովումը, վերջիններիս ծրագրերին աջակցությունը և համայնքի խնդիրների հանդեպ երիտասարդների նվիրվածության և կամավորության ճանաչումը: Մասնակցությունը կարող է իրական համարվել, երբ երիտասարդների դերը քաղաքական կուսակցություններում, արհմիություններում և կազմակերպություններում կարևորվում է: Ավելին, այս համատեքստում կարևորվում է նաև երիտասարդների հետ և երիտասարդների կողմից երիտասարդական կազմակերպությունների հիմնադրման խթանումը:

II. 1 Վերապատրաստում երիտասարդական մասնակցության ոլորտում

43. Տեղական և մարզային իշխանությունները, գիտակցելով, որ դպրոցը գերիշխող նշանակություն ունի երիտասարդների կյանքում, պետք է ապահովեն երիտասարդական մասնակցության, մարդու իրավունքների կրթության և ոչ ֆորմալ ուսուցման թեմաներով աջակցություն և վերապատրաստում դպրոցական միջավայրում: Նրանք պետք է նաև վերապատրաստում և աջակցություն տրամադրեն երիտասարդներին կամավորական գործունեության և տեղական համայնքի կյանքին մասնակցելու վերաբերյալ՝ խթանելով.

i. ուսուցիչների և երիտասարդական աշխատողների մասնագիտական վերապատրաստումը երիտասարդական մասնակցության գործնական կիրառման ոլորտում,
ii. դպրոցներում աշակերտների մասնակցության բոլոր ձևաչափերը,
iii. դպրոցներում քաղաքացիական կրթության ծրագրերը,
iv. հասակակիցների կրթությունը՝ տրամադրելով անհրաժեշտ պայմաններ և միջոցներ և աջակցելով լավագույն օրինակների փոխանակմանը:

44. Տեղեկատվությունը հաճախ մասնակցության կարևորագույն պայմաններից է, և երիտասարդներին վերաբերող հարցերին և ոլորտի հնարավորություններին առնչվող տեղեկատվության հասանելիության իրավունքը ավելի ու ավելի է ճանաչվում եվրոպական և միջազգային պաշտոնական փաստաթղթերում՝ և ոչ միայն տեղական ու մարզային կյանքի համատեքստում:

II.2 Երիտասարդների տեղեկացվածություն

45. Իրենց համայնքի կյանքին և միջոցառումներին մասնակցելու համար կամ իրենց վերաբերող ծառայություններից և հնարավորություններից օգտվելու համար երիտասարդները պետք է տեղյակ լինեն դրանց մասին: Իրենց հետաքրքրող միջոցառումներին և ծրագրերին մասնակցելը և իրենց կողմից նմանատիպ միջոցառումների կազմակերպումը համայնքում, ինչպես նաև

վերջինիս քաղաքական կյանքում ներգրավվելու գործընթացի առաջին քայլերից է:

46. Այս համատեքստում տեղական և մարզային իշխանությունները պետք է աջակցեն և բարելավեն երիտասարդների համար նախատեսված տեղեկատվական և խորհրդատվական կենտրոնների գործունեությունը, որպեսզի ապահովեն մատուցվող ծառայությունների որակը և համապատասխությունը երիտասարդների կարիքներին: Այն վայրերում, որտեղ նման կենտրոններ չկան, տեղական և մարզային իշխանությունները, ինչպես նաև այլ դերակատարներ, պետք է խթանեն և աջակցեն երիտասարդների համար նախատեսված տեղեկատվական կենտրոնների ստեղծմանը, այդ թվում նաև գործող նմանատիպ կառույցների միջոցով, ինչպիսիք են դպրոցները, երիտասարդական ծառայությունները և գրադարանները: Հատուկ միջոցառումներ պետք է ձեռնարկվեն երիտասարդների այն խմբերի տեղեկատվական կարիքները բավարարելու համար, որոնց համար այդ տեղեկատվությունը անհասանելի է (լեզվական խոչընդոտներ, համացանցի անհասանելիություն, և այլն):

47. Երիտասարդների համար նախատեսված տեղեկատվական ծառայությունները պետք է համապատասխանեն մասնագիտական որոշակի սկզբունքներին և չափանիշներին: Հանրային իշխանությունները պետք է երաշխավորեն նման չափանիշների առկայությունը և խթանեն վերջիններիս շարունակական բարելավումը՝ նկատի ունենալով վերջիններիս համապատասխանությունը ազգային (տարածաշրջանային) մակարդակով ընդունված որակական

չափորոշիչներին և չափանիշներին, որտեղ որ հնարավոր է: Երիտասարդներին պետք է հնարավորություն տրվի մասնակցել երիտասարդական տեղեկատվական կենտրոնների/ծառայությունների միջոցառումների նախապատրաստմանը, իրականացմանը և գնահատմանը, ինչպես նաև ներկայացված լինել կառավարման մարմիններում:

II.3 Երիտասարդական մասնակցության խթանումը տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների միջոցով

48. Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաները նոր հնարավորություններ են առաջարկում՝ երիտասարդներին տեղեկատվությամբ ապահովելու և վերջիններիս մասնակցությունը խրախուսելու համար: Դրանք կարող են օգտագործվել տարբեր բնույթի տեղեկատվություն փոխանակելու համար և բարձրացնել երիտասարդների մասնակցությունը՝ իրենց ինտերակտիվության շնորհիվ: Այդ իսկ պատճառով, տեղական և մարզային իշխանությունները պետք է օգտագործեն այս տեխնոլոգիաները տեղեկատվության տարածմանը և մասնակցությանն ուղղված իրենց քաղաքականություններում այն պայմանով, որ դրանց հասանելիությունը երաշխավորված լինի

բոլոր երիտասարդների համար՝ վայրերի հասանելիության և դրանց օգտագործման համար անհրաժեշտ հմտություններով վերապատրաստելու համատեքստում:

II. 4 ԶԼՄ-ներում երիտասարդների մասնակցության խթանում

49. ԶԼՄ-ների հիմնական սպառող լինելով հանդերձ՝ երիտասարդները կարող են լինել նաև ոլորտի դերակատարներ՝ այդպիսով մեծացնելով իրենց տրված արտահայտվելու հնարավորությունը և մասնակցելով ԶԼՄ-ների կողմից ներկայացվող տեղեկատվության մշակման գործընթացում: Որոշակի թեմաների հետ գործ ունենալու իրենց հատուկ միջոցների շնորհիվ նրանք կարողանում են տարբեր և հաճախ ավելի հասանելի տեղեկատվություն ապահովել իրենց հասակակիցների համար: Նմանատիպ մասնակցությունը թույլ է տալիս երիտասարդներին ընկալել տեղեկատվության կառուցվածքը և զարգացնել համապատասխան քննադատական ձիրք:

50. Այդ իսկ պատճառով, տեղական և մարզային իշխանությունները պետք է աջակցեն այն ԶԼՄ-ների (ռադիո, հեռուստատեսություն, տպագիր և էլեկտրոնային մամուլ, և այլն) ստեղծմանը և գործունեությանը, որոնք մշակվել են երիտասարդների կողմից և երիտասարդների համար, ինչպես նաև համապատասխան վերապատրաստման ծրագրերին:

II.5 Կամավորության և համայնքային կյանքում ներգրավման խրախուսում

51. Երիտասարդները պետք է աջակցություն և խրախուսում ստանան՝ կամավորական աշխատանքում ներգրավվելու համար: Երբ երիտասարդները անընդհատ ճնշման են ենթարկվում կրթության և աշխատանքի ոլորտում որպես անհատ կայանալու գործընթացում, շատ կարևոր է, որ կամավորությունը խրախուսվի և ճանաչում ստանա: Այդ իսկ պատճառով, տեղական և մարզային իշխանությունները պետք է՝

i. աջակցեն կամավորական կենտրոնների ստեղծմանը և մշակեն նախաձեռնություններ, որոնք ուղղված են կամավորական աշխատանքում (օրինակ՝ տեղեկատվական և քարոզչական արշավներ) երիտասարդների ներգրավվածության աջակցմանը և խրախուսմանը,

ii. երիտասարդների, կամավորական կազմակերպությունների, կրթական կառույցների և գործատուների հետ միասին մշակեն համակարգեր, որոնք ճանաչում են կամավորական աշխատանքը ֆորմալ կրթական համակարգում և գործատուների շրջանում:

II. 6 Աջակցություն երիտասարդական ծրագրերին և նախաձեռնություն ներին

52. Երիտասարդները շատ գաղափարներ ունեն, որոնք հիմնված են իրենց հույսերի և ցանկությունների վրա և կարող են վերածվել ծրագրերի և տեղական միջոցառումների, որոնք կարող են օգտակար լինել բոլորի համար: Պատշաճ աջակցություն ստանալու դեպքում այս ծրագրերի հաջողությունները, ինչպես նաև ձախողումները կարող են օգնել երիտասարդներին զարգացնել պատասխանատվության զգացում և ինքնավարություն՝ այդպիսով սոցիալական դերակատարներ դառնալով: Այդ իսկ պատճառով, տեղական և մարզային իշխանությունները պետք է աջակցեն նման ծրագրերի (թե փոքրամասշտաբ, թե մեծամասշտաբ) իրականացմանը՝ խրախուսելով մասնագիտական, ֆինանսական, նյութական և տեխնիկական աջակցությունը դրանց իրականացման ընթացքում:



II. 7 Երիտասարդական կազմակերպություն ների խթանումը

53. Երիտասարդական կազմակերպությունները եզակի են նրանով, որ արտահայտում են երիտասարդների տեսակետները և ծառայում են վերջիններիս կարիքներին և հետաքրքրություններին: Դրանք նաև տրամադրում են տարածք, որտեղ երիտասարդները կարող են սովորել և այլ երիտասարդների հետ փորձարկել որոշումների կայացմանը և գործողություններ նախաձեռնելուն մասնակցելու հնարավորությունները և մարտահրավերները: Դրանք կարող են լինել համակարգված կազմակերպություններ կամ երիտասարդների ոչ ֆորմալ խմբեր: Կարևոր է, որ երիտասարդները հնարավորություն ունենան միանալ իրենց համայնքի իրենց նախընտրած երիտասարդական կազմակերպությանը, եթե ունեն դրա ցանկությունը: Երիտասարդները պետք է նաև իրավունք ունենան հիմնելու իրենց սեփական կազմակերպությունները, եթե ցանկանում են: Այդ իսկ պատճառով՝

i. տեղական և մարզային իշխանությունները պետք է ունենան հատուկ բյուջե՝ նախատեսված միայն երիտասարդական կազմակերպություններին աջակցելու համար: Վերջիններս պետք է միջոցառումներ իրականացնեն կամ



ծառայություններ մատուցեն կամ ներկայանան որպես համայնքում երիտասարդության ձայն և հանդես գան երիտասարդների անունից: Նախընտրությունը պետք է տրվի այն կազմակերպություններին, որոնք կառավարվում են երիտասարդների կողմից և երիտասարդների համար և/կամ ունեն գործող քաղաքականություն և համակարգեր, որ հնարավոր են դարձնում ակտիվ երիտասարդական մասնակցությունը,

ii. երիտասարդների և երիտասարդական կազմակերպությունների հետ միասին տեղական և մարզային իշխանությունները պետք է զարգացնեն Եվրոպայի Խորհրդի համակառավարման սկզբունքը և որոշումների կայացման համակարգը քաղաքականության այն ոլորտներում, որոնք հատուկ են երիտասարդներին: Կարևոր է նշել, որ այնտեղ, որտեղ համակառավարման նման կառույցները գործում են, երիտասարդները և երիտասարդական

կազմակերպությունները դիտարկվում են որպես լիարժեք գործընկերներ և կարող են ընտրել չմասնակցել, եթե այդպես են ցանկանում:

II. 8 Երիտասարդական մասնակցությունը հասարակական կազմակերպություն ներում (ՀԿ) և քաղաքական կուսակցություն ներում

54. Աշխույժ, անկախ և ակտիվ հասարակական դաշտի առկայությունը ցանկացած իրական ժողովրդավարական հասարակության հիմնական բաղադրիչն է: Կարևոր է նաև, որ քաղաքացիական հասարակության մյուս ոլորտները, ինչպիսիք են քաղաքական կուսակցությունները, ուժեղ և ակտիվ լինեն տեղական և մարզային մակարդակում: Ցանկացած երկրի, մարզի կամ տեղանքի ժողովրդավարական կյանքում մասնակցությունը ավելին է, քան մի քանի տարին մեկ քվեարկության մասնակցելը: Այդ իսկ պատճառով մասնակցությունը հասարակական և քաղաքական կյանքում այդքան կարևոր է: Այն օգնում է քաղաքացիներին ներգրավվել և շարունակաբար ազդել որոշումների և գործողությունների վրա: Այդ իսկ պատճառով, շատ կարևոր է, որ երիտասարդները խրախուսվեն և աջակցություն ստանան իրենց համայնքների կյանքին մասնակցելու գործընթացում:

55. Տեղական և մարզային իշխանությունները պետք է ապահովեն ֆինանսական և այլ ռեսուրսներ այն ՀԿ-ներին, որոնք իրենց գործունեության և որոշումների կայացման ժողովրդավարական համակարգերում և գործընթացներում ակտիվորեն խթանում են երիտասարդական մասնակցությունը:

56. Տեղական և մարզային իշխանությունները, քաղաքական կուսակցությունների հետ միասին, պետք է անաչառորեն խրախուսեն երիտասարդների ներգրավվածությունը կուսակցության քաղաքական համակարգում, ընդհանուր առմամբ, և աջակցեն հատուկ միջոցառումներին, ինչպես օրինակ, վերապատրաստումներին:

Տեղական և մարզային կյանքում երիտասարդների ինստիտուցիոնալ մասնակցություն

57. Մաս I-ում ներկայացված ոլորտային քաղաքականություններն իրականացնելու համար տեղական և մարզային իշխանությունները պետք է նախաձեռնեն համապատասխան կառույցների կամ կարգավորումների գործարկումը՝ հնարավոր դարձնելով երիտասարդների մասնակցությունը իրենց վերաբերող որոշումներին և քննարկումներին:

58. Այս կառույցները տարբեր ձևեր կարող են ստանալ կախված նրանից, թե որ մակարդակում են ստեղծվել՝ գյուղ, քաղաք, քաղաքի որևէ համայնք կամ նույնիսկ մարզ: Դրանք պետք է ստեղծեն պայմաններ երիտասարդների և տեղական ու մարզային իշխանությունների մեջ իրական երկխոսության և համագործակցության համար՝ հնարավոր դարձնելով երիտասարդների և վերջիններիս ներկայացուցիչների լիարժեք դերակատարությունը այն քաղաքականությունների մշակման գործընթացներում, որոնք վերաբերում են վերջիններիս: Նման կառույցները սովորաբար պետք է ներկայացուցչական և մշտական բնույթ կրեն՝ զբաղվելով այն բոլոր հարցերով, որոնցով երիտասարդները հետաքրքվում են: Բացի այդ, հնարավոր է նաև ժամանակավոր կառույցի ստեղծում՝ կոնկրետ խնդրի քննարկմամբ կամ լուծմամբ զբաղվելու համար: Երբեմն կարող է տարբեր ձևերի համադրության կարիք առաջանալ:

III. 1 Երիտասարդական խորհուրդներ, երիտասարդական խորհրդարաններ, երիտասարդական ֆորումներ

59. Տեղական և մարզային գործերում երիտասարդների արդյունավետ մասնակցությունը պետք է հիմնված լինի իրենց համայնքում տեղի ունեցող սոցիալական և մշակութային փոփոխությունների մասին տեղեկացվածության վրա: Սա պահանջում է մշտական ներկայացուցչական կառույցի առկայություն, ինչպես օրինակ երիտասարդական խորհուրդն է, երիտասարդական խորհրդարանը կամ երիտասարդական ֆորումը:

60. Նման կառույցը պետք է կազմված լինի կազմակերպության կողմից ընտրված կամ նշանակված և/կամ կամավոր երիտասարդներից: Կառույցի անդամությունը պետք է արտացոլի համայնքի սոցիոլոգիական կառուցվածքը:

61. Երիտասարդները պետք է ստանձնեն ուղղակի պատասխանատվություն և ակտիվ դերակատարում ունենան իրենց վերաբերող քաղաքականություններում: Այս նպատակով տեղական և մարզային իշխանությունները պետք է ստեղծեն կամ աջակցեն այդ կառույցներին ակտիվ մասնակցության համար:

62. Այս կառույցները պետք է ապահովեն երիտասարդների մտահոգությունները, հատկապես իշխանությունների մոտ, ազատ արտահայտվելու և առաջարկներ ներկայացնելու համար անհրաժեշտ ֆիզիկական շրջանակի գոյությունը: Բարձրաձայնվող խնդիրները պետք է արտացոլեն այս Խարտիայի Մաս I-ում ներկայացված խնդիրները:

63. Նման կառույցի դերը պետք է լինի՝

i. երիտասարդների մտահոգությունների, այդ թվում նաև, իշխանությունների առաջարկների և քաղաքականության վերաբերյալ, ազատ արտահայտման համար նախատեսված ֆորումի ապահովումը,
ii. երիտասարդներին կողմից տեղական և մարզային իշխանություններին առաջարկներ ներկայացնելու հնարավորության ընձեռումը,
iii. իշխանությունների կողմից երիտասարդներին հատուկ հարցերի շուրջ խորհրդատվության ապահովումը,
iv. երիտասարդներին ներգրավող ծրագրերի մշակման, մշտադիտարկման և գնահատման համար անհրաժեշտ ֆորումի ապահումը,
v. երիտասարդական կազմակերպությունների խորհրդատվության ապահովումը
vi. տեղական և մարզային իշխանությունների այլ խորհրդատվական մարմիններում երիտասարդական մասնակցության խթանումը:

64. Իրենց վերաբերող խնդիրները բարձրաձայնելու և դրանց լուծմանն ուղղված քայլեր ձեռնարկելու համար երիտասարդներին հնարավորություն տալով՝ նման

կառույցները երիտասարդներին վերապատրաստում են ժողովրդավարական կյանքի և հանրային գործերի կառավարման ոլորտում:

65. Այդ իսկ պատճառով, երիտասարդների մասնակցությունը նման կառույցներում և դրանց շրջանակներում իրականացվող միջոցառումներին պետք է խրախուսվի, որպեսզի խթանվեն ժողովրդավարական քաղաքացիության վերաբերյալ ուսուցման և պրակտիկայի ոլորտում երիտասարդների հմտությունները: Հատկապես այն երիտասարդների համար, ովքեր նման ծրագրերի և իշխանությունների հետ երկխոսության նախաձեռնողներ են, նման կառույց-



ները պետք է ապահովեն նաև ժողովրդավարական առաջնորդության թեմայով վերապատրաստման հնարավորություն:

66. Տեղական և մարզային իշխանությունները, ինչպես նաև երիտասարդները, կարող են նաև օգուտ քաղել այն բազմարկիչ ազդեցությունից, որ կարող է ունենալ նման կառույցներում երիտասարդների մասնակցությունը: Հատկապես կարևոր է խրախուսել երիտասարդներին իրացնել իրենց քաղաքացիական իրավունքները՝ օրինակ, ընտրություններում կամ այլ տեսակի քվերակություններում, այդ թվում նաև հանրաքվեին, մասնակցելով:

67. Արդյունավետ գործելու համար երիտասարդական մասնակցության կառույցները (ֆորմալ և ոչ ֆորմալ) ռեսուրսների և աջակցության կարիք ունեն: Այս նպատակով տեղական և մարզային իշխանությունները նման կառույցներին պետք է ապահովեն տարածքով, ֆինանսական միջոցներով և նյութական աջակցությամբ, որպեսզի ապահովվի վերջիններիս արդյունավետ գործունեությունը: Նման միջոցների ապահովումը չի բացառում նման

III. 2 Աջակցություն երիտասարդական մասնակցության կառույցներին



կառույցների կողմից այլ աղբյուրներից, ինչպիսիք են մասնավոր հիմնադրամները և ընկերությունները, հավելյալ ֆինանսական և նյութական աջակցություն փնտրելը:

68. Տեղական և մարզային իշխանությունները պետք է երաշխավորեն աջակցության ապահովումը երիտասարդական մասնակցության կառույցներին: Այս նպատակով նրանք պետք է երաշխավոր՝ անհատ կամ անհատների խումբ, նշանակեն, ով կհետևի աջակցության միջոցների իրացմանը, ում հնարավոր կլինի դիմել անհրաժեշտության դեպքում:

69. Այս անհատը կամ անհատների խումբը պետք է անկախ լինի քաղաքական և երիտասարդական մասնակցության կառույցներից, իսկ առաջադրումը պետք է համաձայնեցվի վերոնշյալ երկու կողմերի միջև:

70. Բացի վերոնշյալ աջակցության ապահովումից, այս անհատների գործառույթները կարող են ներառել՝

i. երիտասարդների և ընտրված տեղական և մարզային իշխանությունների միջև ցանկացած կողմից բարձրացված հարցի շուրջ որպես միջնորդ հանդես գալ,
ii. որպես երիտասարդների ջատագով հանդես գալը, երբ վերջիններիս և տեղական ու մարզային իշխանությունների մեջ կա լարվածություն,
iii. որպես կապող օղակ հանդես գալը, որի միջոցով տեղական և մարզային իշխանությունները կարող են հաղորդակցվել երիտասարդների հետ,
iv. երիտասարդների և տեղական իշխանությունների համար կանոնավոր հաշվետվություններ պատրաստելը՝ տեղական և մարզային կյանքում երիտասարդների մասնակցության մակարդակը գնահատելու համար, օրինակ՝ ծրագրերի իրականացման միջոցով կամ երիտասարդական մասնակցության կառույցներում ընդգրկված լինելով, ինչպես նաև գնահատել մասնակցության ազդեցությունը: